ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հուլիս 2023թ. N ՄՈ 262 -Ա

ք. Արմավիր

«ԱՐՇԱԼՈՒՅՍԻ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարիամ Հովսեփյանի 2023 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիամ Հովսեփյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարիամ Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Հասմիկ Էլոյանին:
3. 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Հասմիկ Էլոյանի աշխատավարձի վճարումը իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարիամ Հովսեփյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 21-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.07.2023 14:56:56 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ